ՎԱՏԻԿԱՆԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Վատիկանեան Մատենադարանը այցելողները կը տեսնեն միայն ձեռագիր Աստուածաշունչի գիրքեր և ուրիշ հին ձեռագիրներ, ցուցադրուած Յեկեղեցական Մատրան և Բոփայէլի Պենեակներու մերձակայ սրահներուն մէջ։ Ամենաչքաղաղ սրահն է Աշխարհագրական Թանգարան կոչուածը, որու պատերը զարդարուած են միջնադարեան աշխարհագրական քարտէզներով և ուրիշ գծագրուած տախտակներով, ինչպէս նաև հօթանասուն անմահ հռոմայեցիներու կիսանդրիներով. հոն կը գտնուին նաև երկու չնաշխարհիկ առարկաներ, աշխարհի ամենամեծ ու ամենափոքր Աստուածաշունչ մատեանները, երկուքն ալ գոյնագոյն կաշեկազմ. մին սակայն գնդաձեւ խոշոր զարդերով պատուած և փայտէ կոյտի մը երեւոյթը առած. իսկ միւսը այնքան փոքր է նօսր՝ որ կարծես հովի մեղմ շունչով փետուրի նման պիտի տարուբերի։

Թէև ցուցադրուած Աստուածաշունչ գիրքերէն ոմանք ոսկիով և յարգի քարերով պաճուճազարդուած են, սակայն Մատենադարանի ամենէն թանկագին առարկաները անոնք չեն կազմեր։ Վիրգիլիոսի ձեռագիրը ինչպէս և Վատիկանեան կոչուած լատիներէն Աստուածաշունչի ձեռագիրը, երկուքն ալ Գրիսոստոմի չորրորդ դարէն, անհամեմատ արժէք ունեցող գանձեր են։

Վատիկանեան Առաքելական Մատենադարանը, ինչպէս սովոր են անուանել, հիմնուած է Յեկեղեցոս Դ. քահանայապետէն, որ 1588ին իր պալատի մէկ յարկաբաժնին մէջ Յեկեղեցական Մատրան կից, գետեղեց այն բազմաթիւ ձեռագիրները զոր 1477ին Նիկողայոս Ե. պապը հաւաքած էր։ 1623ին Պաւիերայի Մաքսիմիլիանոս կոմսը պապին ընծայեց Պալատինեան գրադարանը՝ զոր Հայտելպերկի մէջ գտած էր։ Այսն մատենադարանը Վատիկանեան Գրատան մէկ մասին հետ 1797ին Բարիզ տարուեցաւ։ Անկից Պալատինեան գրադարանը փոխադրուեցաւ նորէն Հայտելպերկ, իսկ մնացորդն ալ Վատիկան դարձուեցաւ 1816ին։

Վատիկանեան Մատենադարանի պատմութիւնը կապուած է Վերածնունդի պատմութեան հետ։ Վերածնունդի բանասէրները եղան որ ճանչցուցին ձեռագիրներու յարգը և յոյն, լատին ու նոյն իսկ եգիպտական ձեռագիրներ հաւաքելու իրենց եռանդը մեծապէս ճոխացուց Վատիկանեան Գրատունը։ Կարտինալներու և ուսումնասէր անձերու ունեցած հաւաքածոները, նոյնպէս ուրիշներէ կատարուած նուէրները Մատենադարանը հարստացուցին։

Կարելի չէ ճշգրիտ գաղափար մը կազմել դեռ Վատիկանեան Գրատան ճոխութեան նկատմամբ։ Ձեռագիրներու հաւաքածոն 50–60 հազար հատոր կ'ամփոփէ. իսկ տպագրուած գրքերունը շուրջ 400 հազար։ Այս հատորներէն իւրաքանչիւրն ալ մերթ երեք, չորս և մինչև տասը տարբեր գիրքեր կը պարունակէ։

Մեծ անպատեհութիւն մը՝ որ մինչև այսօր ունէր այս Մատենադարանը, ամբողջական գրոց ցուցակի մը չգոյութիւնն էր։ Գիրք մը փնտռելու համար հարկադրուած էր մարդ ութէն տասը ցանկեր աչքէ անցնել. ամէն յետոյ յաւելեալ նոր ժողովածոյ իր առանձին ցանկը ունէր, և ամէն ցանկ այլ այլազան դրութեամբ կազմուած էր։

Վատիկանեան Մատենադարանին բանաւոր դասաւորութիւն մը կարելի ընելու համար մեծահարուստ Որկան Վատիկանի տրամադրեց կարեւոր գումարը. նուէրը շնորհակալութեամբ ընդունուեցաւ։ Սակայն խնդիրին դժուարութիւնը կը կայանար որոշիչն մէջ թէ այս աշխատութեան կատարման մէջ ո՞ր դրութեան պէտք էր հետեւիլ։ Այս խնդիրը քննելու համար կազմուած իտալական ցանձնախումբը վճռեց ընդգրկել Վաշինկդոնի 1899ի գրադարանական ժողովին ցուցակագրութեան կանոնները զոր ընդունած են բացի Ամերիկայէն նաև Անգղիա, Ռուսիա, Նորվեկիա, Էստոնիա, Զէքոսլովաքիա և ուրիշ ազգեր։

Դասաւորման սոյն աշխատութիւնը վարելու պատուաւոր պաշտօնը յանձնուած է Ռուսցչապետ Հանսոնի, Մատենադարանապետ Զիքակոյի գրատան և գրոց ցանկերու դասաւորման ամերիկեան ցանձնախումբին նախկին նախագահ։ Այս նոր գրութեամբ գրոց ցուցակը 22 հատորնէրէ պիտի բաղկանայ։

Ըստ. Հանսոնի հաշիւին համեմատ տասէն տասներկու տարիներ հարկաւոր են գործը լրացնելու համար։ Դա կը կարծէ թէ Գրատան գիրքերուն մէջ, մասնաւորապէս ԺԶ. դարուն տպուածներուն մէջ, բազմաթիւ գիրքեր պիտի գտնուին որոնցմէ ուրիշ օրինակներ չկան և այս պատճառաւ առ այժմ ծանօթ չեն ատոնք։ 1500էն առաջ շուրջ 6600 գիրք տպուած են, որոնց անունը յայտնի է։ ԺԶ. դարուն մէջ տպուածներուն նկատմամբ ստոյգ բան չենք գիտեր։ Վատիկանի Գրատունը այս մասամբ նոր յայտնութիւններ կրնայ կատարել։

* * *

digitised by A.R.A.R.@